ՄԵՏԱՔՍԵ

891.99
Ս-65

Զրույց ուշխատրհի հետ

891.99
Ս-65

04 JUL 201

ՄԵՏԱՔՍԵ

ԶՐՈՒՅՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

ԵՐԵՎԱՆ
ՀԳՄ հրատարակչություն
2007

Խրվում են նրա շերտերը փխրուն...
Մենք պայքարեցինք աչքածակության,
Մոլախոտերի վնասների դեմ,
Բայց նրանք որպես ցավի տնօրեն
Այնքան շատացան,
Որ եկան, հասան կեցությանս մեծ...
Ես հղի զգոն ներքնատեսությամբ,
Լուռ կորուստներիս մորմոքից ճչում,
Ահազանգում եմ ի լուր աշխարհին,
Թե սթափվեցե՛ք, ճզմեցե՛ք ձեր մեջ
Փորձությունների սաղմերը թունոտ,
Որոնք ծնվում են որպես հին ամոթ,
Որպես գոյության սարսափի տագնապ,
Որպես մահի կանչ...

Ախ, ես չգիտեմ,
Թե այդ ինչպե՞ս ենք պայքարում իրավ
Մոլախոտային այդ չարիքի դեմ,
Որ նրանք դարձել այսքան անիրավ,
Թիզ առ թիզ հողիս խորքերը սողում,
Մեր վշտի վրա նոր վիշտ են մաղում...

ՔԱՐԵ ԱՂԲՅՈՒՐ

Մեր գյուղից հեռու, սարերի գոտում,
Զով հովոցների թիկունքում ծաղկած,
Կան սարը տանող շավիղներ խռիվ,
Որոնց դեմ արթուն
Ճախրում է անշարժ թևերը փռած
Քարե մի արծիվ...
Հսկա թռչունի տուֆե սրտի տակ,
Լուռ թրթռում է մի զուլալ աղբյուր,
Որ պաղ է, ինչքան արեգակն է տաք,
Ու զուլալ, ինչպես զավակի համբույր...

Կանաչ բացատում, աղբյուրի հովին,
Ամառողները պար բռնած կլոր,
Խաղեր են կապել, պարել խմբովին,
Երբ Կոմիտասը ամառվա մի օր
Ոտքով եկել է, հասել սարվորին,
Ու գրի առել մի քարի նստած
Նրանց արևցող շուրթերից թռած
Խոսքի մի պատառ, երգի մի կտոր...

Մեր գյուղից հեռու, հով սարերի մեջ
Այն ջրի կողքին, որ Քարե աղբյուր
Անվանումն ունի,
Դեռ մինչև հիմա կա հնամենի
Սրբացած մի քար,
Որին նստել է երգի մեծ արքան.
Քարը բոլորող մաշված մի կածան
Բռնել ժայռեղեն թևից սեգ արծվի,
Սանձում է նրա թռիչքը մի պահ,
Որ հավերժ տևի...

ՆՌՆԵՆԻՆԵՐ

Նռնենիներ, իմ հարազատ նռնենիներ,
Նայում եմ ձեզ ու սրտիս մեջ լուռ հեկեկում.
Թե ինչպե՞ս եք տանում այսքան արցունքի բեռ
Ձեր ուսերին
Ու չեք ճաքում...
Ասում են թե՝
Երեք հարյուր վաթսուն կյանք կա
Մի նռան մեջ,
Երեք հարյուր վաթսուն կարմիր,
Կարմիր հատիկ,
Որ քամվել է հեռու-հեռու
Մեր դարերում
Արմենական իմ հին ցեղի
Սիրո հունդից...